ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Խտրականությունը հակաօրինական է: MSSP կենտրոնը՝ _____, հետևում է քաղաքացիական իրավունքների մասին նահանգային և դաշնային օրենքներին: MSSP կենտրոնը՝ _____, խտրականություն չի դրսևորում, չի բացառում մարդկանց կամ չի վերաբերվում նրանց տարբեր կերպ՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, կրոնի, ծագման, ազգային պատկանելության, էթնիկ խմբի պատկանելության, տարիքի, մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, առողջական վիճակի, գենետիկական տեղեկատվության, ամուսնական կարգավիճակի, գենդերի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հիման վրա:

MSSP կենտրոնը՝ _____, տրամադրում է՝

- Անվճար օժանդակ միջոցներ և ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ նրանց ավելի լավ հաղորդակցվելու համար, ինչպիսիք են՝
  - Որակավորված ժեստերի լեզվի թարգմանիչներ
  - Գրավոր տեղեկատվություն այլ ձևաչափերով (մեծ տպագրություն, աուդիո, հասանելի էլեկտրոնային ձևաչափեր, այլ ձևաչափեր)

- Անվճար լեզվական ծառայություններ այն մարդկանց համար, որոնց մայրենի լեզուն անգլերենը չէ, ինչպիսիք են՝
  - Որակավորված թարգմանիչներ
  - Տեղեկատվություն՝ գրված է այլ լեզուներով

Եթե Ձեզ անհրաժեշտ են այս ծառայությունները, կապվեք MSSP կենտրոնի հետ՝ _____ աշխատանքային ժամերին՝ _____-ից _____-ը՝ զանգահարելով հետևյալ հեռախոսահամարով՝ _____:

Կամ, եթե լավ չեք լսում կամ խոսում, խնդրում ենք զանգահարել TYY/TDD հեռախոսահամարով _____:

Պահանջի դեպքում այս փաստաթուղթը կարող է Ձեզ հասանելի լինել Բրայլի գրերով, խոշոր տառատեսակով, աուդիո կամ հասանելի էլեկտրոնային ձևաչափերով:

ԻՆՉՊԵՍ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

Եթե կարծում եք, որ MSSP կենտրոնը՝ _____, չի մատուցել այս ծառայությունները կամ այլ կերպ խտրականություն է դրսևորել սեռի, ռասայի, մաշկի գույնի, կրոնի, ծագման, ազգային պատկանելության, էթնիկ խմբի պատկանելության, տարիքի, մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական վիճակի, գենետիկական տեղեկատվության, ամուսնական կարգավիճակի, գենդերի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հիման վրա, կարող եք բողոք ներկայացնել _____ MSSP կենտրոն: Դուք կարող եք բողոք ներկայացնել հեռախոսով, գրավոր, անձամբ կամ էլեկտրոնային եղանակով՝

- **Հեռախոսով.** Կապվեք MSSP կենտրոնի հետ աշխատանքային ժամերի՝ _____-ից _____-ը՝ զանգահարելով հետևյալ հեռախոսահամարով՝ _____: Կամ, եթե լավ չեք լսում կամ խոսում, խնդրում ենք զանգահարել TYY/TDD հեռախոսահամարով _____:
- **Գրավոր.** Լրացրեք բողոքարկման ձևը կամ գրեք նամակ և ուղարկեք այն հետևյալ հասցեով՝

  MSSP կենտրոնի անվանումը՝ _____
  Հասցե՝ _____
- **Անձամբ.** Այցելեք Ձեր մատակարարի գրասենյակ կամ MSSP կենտրոն՝ _____, և ասեք, որ ուզում եք բողոք ներկայացնել:
- **Էլեկտրոնային եղանակով.** Այցելեք Ձեր մատակարարի կայքը՝ _____ հասցեով:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Դուք կարող եք նաև քաղաքացիական իրավունքների խախտման վերաբերյալ բողոք ներկայացնել Կալիֆորնիայի Առողջապահական ծառայությունների բաժանմունքի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ՝ հեռախոսով, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով.

- **Հեռախոսով.** Զանգահարեք **916-440-7370** հեռախոսահամարով: Եթե լավ չեք խոսում կամ լսում, խնդրում ենք զանգահարել **711** (Կալիֆորնիայի նահանգային փոխանցման համակարգ):
- **Գրավոր.** Լրացրեք բողոքի ձևը կամ ուղարկեք նամակ հետևյալ հասցեով՝
  Department of Health Care Services
  Office of Civil Rights
  P.O. Box 997413, MS 0009
  Sacramento, CA 95899-7413

  Բողոքի ձևերը հասանելի են հետևյալ հասցեով՝ https://www.dhcs.ca.gov/discrimination-grievance-procedures.
- **Էլեկտրոնային եղանակով.** Ուղարկեք էլ. նամակ CivilRights@dhcs.ca.gov հասցեին:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ – ԱՄՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Եթե կարծում եք, որ Ձեր նկատմամբ խտրականություն է դրսևորվել ռասայի, մաշկի գույնի, ազգային պատկանելության, տարիքի, հաշմանդամության կամ սեռի հիման վրա, կարող եք նաև քաղաքացիական իրավունքների խախտման վերաբերյալ բողոք ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդկային ծառայությունների բաժանմունքի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ՝ հեռախոսով, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով.

- **Հեռախոսով.** Զանգահարեք **1-800-368-1019** հեռախոսահամարով: Եթե լավ չեք խոսում կամ լսում, խնդրում ենք զանգահարել **TTY/TDD 1-800-537-7697**:
- **Գրավոր.** Լրացրեք բողոքի ձևը կամ ուղարկեք նամակ հետևյալ հասցեով՝
  U.S. Department of Health and Human Services
  200 Independence Avenue, SW
  Room 509F, HHH Building
  Washington, D.C. 20201

  Բողոքի ձևերը հասանելի են հետևյալ հասցեով՝ http://www.hhs.gov/ocr/office/file/index.html.
- **Էլեկտրոնային եղանակով.** Այցելեք Քաղաքացիական իրավունքների գրասենյակի բողոքի պորտալ՝ https://ocrportal.hhs.gov/ocr/portal/lobby.jsf հասցեով: